



# ՀԱՅԿԱԿԱՆ ԻՍԼ-Ի

## ՊԱՎԻԼՈՆ

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց



ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԴԵՐԸ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՆԴԵ

30 JUL 2010

$$\frac{63}{2-20} \text{ 47}$$

# ՀԱՅԿԱԿԱՆ ԻՍՀԵ

## ՊԱՎՈՒԼՈՒՆ

ՈՒ Հ Ե Ց Ա Ր Յ Ց Ց



ՊԵՏՀԱՐԱՑ  
ԿՈԼՏՍՏԵԽԱՅԻՆ ՅԵՎ, ԽՈՐԴՏՆՏԵՍԱՑԻՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԳՅՈՒՂՀՐԱԾ 1939 ՄՈՍԿՎԱ


31 MAY 2013

14783

Պավիլիոնի դիրեկտոր Գ. Ա. Գրիգորյան  
Մերոքիսու Գ. Ա. Ավետիսյան  
Արխիտեկտոր ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի  
դեպուտատ Կ. Ս. Հալաբյան  
Համահեղինակ Ս. Ա. Սաֆարյան  
Գլխավոր նկարիչ Ա. Ա. Զիլինգարյան



6558 - 50



## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Ճայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը — ԽՍՀՄ տասնըմեկ միութենական հանրապետություններից մեկը — գտնվում է Անդըրկովկասի հարավային մասում։ Արևմուտքում ու հարավում Հայաստանը սահմանակից ե Թյուրքիային և Իրանին։ Հյուսիսից ու արևելքից նա սահմանակից ե յեղայլական միութենական հանրապետություններին — Վրաստանին և Աղբյուջանին։

Խորհրդային Հայաստանը լեռնային յերկիր և խիստ կտրաված ուղղեփով։ Լեռնային զանգվածները — Ալագյազի, Աղմաղանի, Դարբաւաղյաղի, Զանգեզուրի և այլն — իրենց մեջ պարունակում են անչափ հարստություններ՝ մոլիբդենից ու խրոմից սկսած մինչև զանազան շինանյութեր։

Հայաստանի դետերը, վորոնք լեռնային զագաթներից սրբնթացորեն հոսում են դեպի հովիտաները, և լեռնային լճերը ծառայում են վորպես վոռոռքան ու եներգետիկայի հարուստ աղբյուրներ։

Զնայած Հայաստանն ունի համեմատաբար փոքր տերիտորիա (29.650 քառակուսի կիլոմետր), այնու-

ամենայնիվ նա աչքի յէ լնկնում Հողային-կլի-  
մայական ու բուսական գոտիների բացառիկ բազմա-  
պանությամբ։ Տոթակեղ Արարատյան դաշտն ունի  
անապատի բուսականություն։ Այստեղ մթնոլոր-  
տային տեղումները տարեկան 200—250 միլիմետրից  
ավելի չեն։ Նախալեռնային գոտին, ծովի մակերե-  
ավելի չեն։ Նախալեռնային գոտին, ծովի մակերե-  
ավելի 1000—1800 մետր բարձր, ունի հարուստ  
վույլթից 1000—1800 մետր բարձր, ունի հարուստ  
շաղանակաղույն հող և սեահող, վորոնք պատված  
շաղանակաղույն հող և սեահող, վորոնք պատված  
են քսերոփիտային բուսականությամբ։ Լեռնային  
շրջանները, ծովի մակերեւություն 1800—2500 մետր  
բարձր, ունեն լեռնա-մարգային հողեր։ Այստեղ  
տեղում են առատ մթնոլորտային տեղումներ և  
աճում ե մերձալպյան ու ալպյան փարթամ բուսա-  
կանություն։

Միայն Խորհրդային իշխանություն հաստատվե-  
լուց հետո հնարավոր գարձավ հանրապետության  
ամենահարուստ եներգետիկական և Հումքային ու-  
սուրսների ոլտագործումն հոգուտ աշխատավո-  
րության շահերի։

Խորհրդային իշխանության գոյության տարինե-  
րի ընթացքում Լենինի—Ստալինի կուսակցության  
կողմից ղեկավարվող Հայկական ԽՍՀ-ն դարձավ  
զարգացած ինդուստրիայի և ծաղկած գյուղատն-  
տեսության յերկիր։ Մոտ յերկու հազար կոլ-  
տընտեսություններ, խորհանտեսություններ, Հա-  
յաստանի գյուղատնտեսության առաջավորներ նվա-  
ճել են Համամիութենական գյուղատնտեսական  
ցուցահանդեսին մասնակցելու պատվավոր իրա-  
վունքը։ Լավագույն կոլտնտեսությունների, խորհ-  
անտեսությունների և սոցիալիստական գյուղա-  
տընտեսության առաջավորների բոլոր այդ նվա-  
ճումներն ու աշխատանքի մեթոդները ցույց են  
տրված Հայկական ԽՍՀ-ի պավիլիոնում։

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ<sup>11</sup> ՊԱՎԻԼԻՈՆԸ

Կոլտնտեսությունների հրապարակում, հարեան  
յեղայրական վրացական ու Աղբբեջանական հան-  
րապետությունների պավիլիոնների միջև բարձրա-  
նում և «Հայկական ԽՍՀ» պավիլիոնի մոնումեն-  
տալ շենքը։ Նրա նախագծի հեղինակ՝ ԽՍՀՄ  
Գերագույն Խորհրդի գեպուտատ արխիտեկտոր  
Կ. Ս. Հալաբյանը և համաձեղինակ՝ արխիտեկտոր  
Ս. Ա. Սաֆարյանը պավիլիոնի ձեկի ու մանրամաս-  
նությունների մեջ արտահայտել են Հայկական աղ-  
դային արխիտեկտուրայի գծերը։ Գլխավոր մուտ-  
քի մեծ նիշան և չեղեղ արկադաները վորպես թե-  
հյուրասիրաբար հաճախորդին հրավիլում են պա-  
վիլիոն։ Գլխավոր մուտքի մոտ քանդակագործա-  
կան յերկու խումբ՝ հովիվը վոչխարներով և կոլ-  
տընտեսություններ, խաղողով, սիմվոլացիոն են Հայ-  
կական ԽՍՀ-ի գյուղատնտեսության առաջատար  
ճյուղերը։

Եենքի պատրաստման և նրա արխիտեկտուրային  
ձևավորման համար ովտագործվել են Հայկական  
ԽՍՀ-ում արդյունահանվող շինանյութերը։ Ցո-  
կոլն ու աստիճանները յերեսապատված են գորշ  
գրանիտով։ Արտաքին մանրամասնությունների հա-  
մար ովտագործվել ե Քոլագվիրանի բաց գույնի  
տրախիտը։ Ներածական գահը լին միջին մասի  
հատակը պատված և Հայաստանի գույնգույն

մարմարներով։ Պալիլլունի բարձր սկառուշանների բրոնզե չփեղ ցանցերը դարձարված են Քոլագիրանի բաց-վարդապույն տրախիտով։

Պալիլիոնն ունի յերեք դահլիճ՝ գլխալոր, 400 քառ. մետր, և յերկու փոքր՝ 200-ական քառ. մետր տարածությամբ։ Գլխավոր դահլիճը թեթև հինգվարոյնոտանոց արկադայով բաժանված է յերեք մասի։ Գլխավոր մուտքի դիմաց դրված է ընկեր Ստալինի սկզբանական, վորը գրանիտից փորադրել է Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր դորձիչ Ա. Մ. Սարգսյանը։ Սկզբանական դրված է Հայկական պեյզաժը ներկայացնող հակայական նկարի Փոնի վրա։ Այդ նկարը հանդիսանում է Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր դորձիչ, շքանշանակիր Մ. Ա. Սարյանի դորձը։



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՇԵՂԱՓՈԽԱՎԱՆ ԱՆՑՅԱԼԸ ՅԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐՉ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանը ցարկոմի ժամանակ մտնում եր Կովկասյան փոխարքայության կազմի մեջ։ Հայաշխատավորների, ինչպես նաև մյուս աղքությունների աշխատավորների համար, Ռուսաստանը ժողովուրդների բանտ եր։ Ռուսական միասնակությունը և տեղական ազգային բուրժուադիման դաժանորեն շահագործում ելին հայ ժողովրդին, նրան պահում ելին խավարի ու տղիտության մեջ։ Ցարական կառավարությունը դիտակցարար հրահրում եր ազգային յերկպատակություն, կազմակերպում եր հայ-թուրքական կոտորածներ Անդրկովկասում։

Առաջին ստենդի Փոտոնյութերն ու փաստաթլթերը ցայտուն կերպով բնութագրում են Հայաստանի աշխատավորների դրությունը մինչև Խորհրդային իշխանության հաղթանակը։ Լուսանըկարը ցույց է տալիս հանքագործների հյուծիչ աշխատանքը, վորոնք 16-ժամյա բանվորական որում իրենց մեջքով հանքերից կրում ելին հանքանյութ և ջուր։ Այդ հյուծիչ աշխատանքի համար ստանալով խղճուկ կոպեկներ, հանքագործները կիսաքաղցկանք ելին վարում։ Ստենդի վրա բերված են դյուղացիների ամենաղաժան շահագործումը բնութագործ նյութեր։ դյուղացիներն աշխատում ելին

վանքերի, աերտերների ու կալվածատերերի հողեռում և ապրում եյին անսառւնների հետ միասին՝ առանց լուսամուտի գետնատներում։ Գյուղացիների գրությունը վառ կերպով նկարագրված է հայ ժողովրդի տաղանդավոր պոետ Հովհաննես Թումանյանի բանաստեղծության մեջ, վորը բերված է ստենդի վրա—

«Ձեռըս պակաս, ուժըս հատած,  
Հաղար ու մի ցալի տեր,  
Ինձ են նայում մերկ ու սոված  
Մի տուն լիքը մանուկներ»։

Հայ ժողովրդի պատմությունը հակեցված է լյուղացիական հուզումներով և ապստամբություններով։ Ուսւ պրոլետարիատի հեղափոխական շարժման անմիջական ազդեցությամբ ծագեց ու աճեց Հայաստանի աշխատավորների պայքարն իրենց հարստահարողների ու ստրկացնողների դեմ։

Կոմունիստական կուսակցության, նրա մեծ կազմակերպիչներ ու սուաջնորդներ՝ ընկերներ լենինի և Ստալինի ղեկավարությամբ հայ ժողովուրդը Համառ պայքար մղեց ցարական միապետության, կալվածատերերի ու տեղական աղքային բուրժուալիստականի դեմ։ Հայաստանի բանվորների և դյուզացիների հեղափոխական շարժման անմիջական դեկալարությունն իրադորեց ՌՍԴԲԿ Անդրկովկայան կենտրոնն ընկեր Ստալինի ղեկավարությամբ։

Փաստաթղթերի ու թուցիկների Փոտոպատճեններում ցույց ետրվում նաև հայ ժողովրդի լավագույն զավակներ՝ ընկերներ Միկոյանի, Շահումյանի, Սպանդարյանի, Փիրուզյանի դերը հայ աշխատավորների հեղափոխական պայքարը ղեկավարելու դորժում։ ցույց և տրվում հեղափոխական

չարժման կենտրոնների կաղմակերպումը Ալավերդում, Ղափանի հանքերում, Ալեքսանդրոպոլի յերկաթուղային արհեստանոցներում։

1905 թվին Հայաստանի աշխատավորները մեծ ոսւ ժողովրդի հետ միասին պայքարի յելան ցարական միապետության դեմ։ Ալավերդում, Բոնակոթում, Խնձորեսկում, Լոռիում, Հաղպատառմ և այլ վայրերում բոնկվեցին գյուղացիական ապահովամբությունները դաժանորեն ճնշվեցին ցարական կառավարության կողմից։

1917 թվի փետրվարյան հեղափոխությունից հետո Հայաստանում իշխանության գլուխն անցան դաշնակները — ուղղմատենչ հայ բուրժուազիայի հակահեղափոխական կուսակցությունը։ Յերկրորդ ստենդի նյութերն ու փաստաթղթերը բնութագրում են հայ ժողովրդի այդ ամենալուսերիմ թշնամիների արյունոտ քաղաքականությունը և Հայաստանի աշխատավորների անտանելի ծանր վիճակը դաշնակների «կառավարության» ժամանակ։ Իրենց «դաշնակցության կուսակցություն» անվանող այդ սանձարձակ բանդիստները Հայաստանը հասցըին ավելիչ պատերազմների՝ թյուրքայի, ինչպես նաև հարեւան Վրաստանի ու Ադրբեյջանի հետ, յերկը ներսում կազմակերպեցին ազգամիջյան կոտրածներ։ Ազգբենանական բնակչությամբ հարյուրավոր դյուզեր վանչացվեցին դաշնակցական մաուզերիստների բանդաների ձեռքով։ Յերկրը հասավ տնտեսական ու կուլտուրական լիակատար անկման։ Տիֆի և այլ հիվանդությունների համաճարակը հազարներով հնձում եր Հայաստանի աշխատավոր բնակչություն։ Նույնիսկ դաշնակցական «կառավարության» այսպես կոչված խնամառության մինիստրության մասին կամաց լավագայության մեջ առաջական պաշտոնական տվյալներով դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի

բնակչության թիվը պակասեց 300 հազար հունվար: Յերևան քաղաքում 1919 թվին բնակչության յուրաքանչյուր 1.000 մարդուց մենում եր 204-ը: Հայաստանը դարձել եր աղքատության, սովոր ռայքայժման յերկիր:

Հայաստանի բոլշևիկները լենինի և Ստալինի ղեկավարությամբ, դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում ևս դիմավորեցին Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը՝ դաշնակցական լուծը տապալելու և Խորհրդային իշխանություն հաստատելու համար:

Փաստաթղթերի, լուսանկարների և նկարների պատճենները ցույց են տալիս բանվորների ու գյուղացիների ապստամբությունները դաշնակների դեմ լենինականում, Նոր Բայազետում, Զանդեղուրում, Լոռիում, Դաղախում և այլ շրջաններում:

1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորները բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ, մեծ ոռւս ժողովրդի ու յեղբայրական Աղրբեջանի աշխատավորության ողնությամբ վերջնականապես կործանեցին դաշնակցական իշխանությունը: Հաջողությամբ պսակվեց հայ ժողովրդի պայքարը հանուն Խորհրդային իշխանության: Հայաստանի վրա ծածանվեց լենինի Ստալինի անպարտելի դրույթ: Հայ ժողովուրդն ընդմիշտ աղքատըվեց դարավոր կարիքից ու սարկությունից:

«Միայն Խորհրդային իշխանության դադափարը խաղաղություն և ազգային վերածնության հնարավորություն բերեց Հայաստանին» (Ստալին):

Ընկեր Ստալինն եղեկավարել Հայաստանում բոլշևիկյան կաղմակերպություն ու Խորհրդային իշխանություն ստեղծելու և ամրապնդելու գործը: Նրան, լավագույն բարեկամին, առաջնորդին և ուսուցչին և պարտական հայ ժողովուրդը սոցիա-

լիստական խաղաղ շինարարության հնարավորության համար: Ընկեր Ստալինի իմաստուն ղեկավարությամբ Հայկական ԽՍՀ-ի աշխատավորները՝ հայերն ու աղբբեջանցիները, քրդերն ու ասորիները, կառուցում են բերկրալի, կուլտուրական և ունկոր կյանք, համոզված կերպով գնում են դեպի կոմունիզմի բարձունքները:



♦

**ԾԱՌԿՈՇ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ—  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Ե**

Մեծ ռելյեֆ քարտեզը այցելույին լրիվ գաղաքար և տալիս Հայաստանի հարստությունների մասին, վորոնք ի սպաս են դրվել աշխատավորաներին։ Բուսական գոտիների և հողային-կլիմայական պայմանների հսկայական բաղմագանությունը հնարավորություն ե տալիս Հաջողությամբ զարգացնել գյուղատնտեսության բաղմաթիվ ճյուղերը ջերմություն սիրող բամբակ, հարավային մրգերի կուլտուրաներ ու խաղողի թանկարժեք տեսակներ աճեցնելուց սկսած մինչև լեռնային անասնաբուծության զարգացումն Ալաղյազի լանջերի ալպյան մարգաղետներում։

Այդ նույն քարտեզի վրա ցույց են տրված ողտակար հանածոների հարուստ հանքավայրերը, վորոնք կտնիում են գլխավորապես նախալեռնային ու լեռնային դոսում, և նրանց շահագործումը։ Վերանայն դոս լրջանի պղնձահանքեր են Ղափանի և Ալավերդանիների կողմէն ու ընդարձակվել են Ղափանի և Ալավերդանիների պղնձահանքերը, վորոնք 1920 թվին դու ըրջանի ելին նախկին «տերերի»—Փրանսիական հեղեղվել ելին նախկին «տերերի»—Գանգեկոնցեսիոնների կողմէից։ Մշակում են Զանգեկոնցեսիոնների ու Դարալազդյալի բաղմագետաղային հանգուրի ու Դարալազդյալի բաղմագետաղային հանգուրի քանյութերը, վերջերս Փիրլոուդանում հայտնաբերքան ված մոլիբդենի համամելութենական նշանակություն

ունեցող վիթխարի պաշարները, Դավալույի և Համամլույի բարձրորակ այն կրաքարի հարուստ պաշարները, վորը ծառայում ե վորպես հումք նոր ստեղծված ցեմենտի հզոր արդյունաբերության համար։

Քարտեզի վրա ցույց են տրված շինանյութերի հանքավայրերը։ Խորհրդային Հայաստանի ունիթանկարժեք գույնդույն մարմարների և ոնիկանեթանկարժեք գույնդույն մարմարների մարմարներով զարդարվել են Մոսկվայի մետրոյի կիկի և այլ կայարանները։ Ալաղյազի նախկին հրաբուխի սառած լավան ու մոխիրը տալիս են թանկարժեք շինանյութեր։ Մահմանչուղի և Արթիկի առողջերի պաշարի բազայի վրա ստեղծվել ե շինանյութերի արդյունաբերություն։ Այդ տուփից կառուցվում են գեղեցիկ տներ վոչ միայն Հայաստանում, այլև յեղբայրական հանրապետությունների բաղմաթիվ քաղաքներում ու Մոսկվայում (Գրքի Տունը, թեթև արդյունաբերության Փողկոմատի շենքը)։ Խոչոր նշանակություն ունեն նաև գրանիտի, բաղալտի և տրախիտի հսկայական պաշարները։

Վոռովումը, ինչպես և հողոգտագործումը մինչև Հայաստանի խորհրդայնացումը հանդիսանում եր աշխատավոր գյուղացիներին ստրկացնելու և շահագործելու միջոց։ Ջրի գիշատիչ ողագործումը հասցնում եր լավագույն հողերի ճահճացմանն ու անպետքացմանը։ Հաստատ հշելով ընկեր Լենինի այն խոսքերը, վոր «Վոռովումն ամենից ավելի յե հարկավոր և ամենից ավելի կվերաստեղծի յերկի- րը, կվերածնի այն, կթաղի անցյալը, կամրացնի ըլ, կվերածնի այն, կթաղի անցյալը, կամրացնի ըլ, կվերածնի անցյալը»—կուսակցությունն ու կասցիալիկմին անցնելը»—կուսակցությունն ու աշխատավարությունը հսկայական աշխատանք կատարեցին զաշնակների ավելած կանալները վերականգնելու և վոռովման նոր, հզոր շանցի շինարարու-

թյան դժով։ 1914 թվին վոռոգվող տարածությունը կազմում եր 97 հազար հեկտար։ Դաշնակների տիրապետության ժամանակ այդ տարածությունը կրծառվեց և հասավ մինչև 60,4 հազար հեկտարի։ Վոռոգվող հողերի տարածությունը 1938 թվին կազմում եր 162 հազար հեկտար։

Քարտեղի վրա ցույց են տրվուծ Հայաստանի գետերը և Սևանա լիճը, վորոնք հանդիսանում են եներդետիկայի ու վոռոգման ռեսուրսների հարուստ ազգյուրներ։ Հիդրոներդիխայի ընդհանուր պաշարը կազմում է 1 միլիոն տուժ։ Գլխավոր գետերը՝ Արագսը, Զանգին, վորոն իր սկիզբն առնում ե Սևանի լեռնային լճից, Արփաչայր և այլն, հանրապետությանը տալիս են հարյուր հազարավոր կիլովատ եներդիխ։ Հայաստանի դյուզատնտեսության զարդացման և գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում վոռոգումն ունի հսկայական նշանակություն։

Խորհրդային իշխանության որոք վերականգնվել են գաշնակների ավերած Եջմիածնի, Դամմայի, Արուճայթի և այլ կանալները։ Կառուցվել ե վոռոգման նոր, խոշոր ցանց։ Շիրակի՝ Լենինի անվան կանալը, Փոքր Սարդարարատի կանալը, Ստալինյան կանալը և այլն։ Տասնյակ հազարավոր հեկտար նախկին անողոտազործելի հողեր և անապատներ դարձել են պտղատու և խաղողի ծաղկող այդիներ, դրագված են թանկարժեք տեխնիկական կուլտուրաներով։

Դիավողակիսի վրա ցույց ե արվում վոռոգման ցանցի նոր կառուցվածքներից մեկը՝ Սարդարաբադի կանալը։ Այցելուն տեսնում ե, թե ինչպես հազարավոր հեկտար նախկին ամայի հողերը վոռոգման միջոցով դարձել են ծաղկող այդիներ։

Սակայն գետերի ու լճերի ջրերն ողտագործվում են վոչ միայն վոռոգման համար։ Այդ ջրերը տա-

լիս են եներդիխ գյուղատնտեսական արտադրության աշխատատար բազմաթիվ պլրոցեսաներն եւեկտրոֆիկացիայի յենթարկելու համար։ Հայաստանի կոլտնտեսությունների 10 տոկոսն ողտվում ե եւեկտրոններդիխից։ Գյուղական 30 հիդրոկայաններ և 90 յենթակայաններ՝ 6.752 կիլովատ ընդհանուր կարողությամբ սպասարկում են Հայկական ԽՍՀ-ի գյուղատնտեսությունը։

Հայաստանի հարյուրավոր գյուղեր, վորոնք յերբեք եւեկտրականություն չենին տեսել, լուսավորվեցին Իլյիչի տասնյակ հազարավոր լամպերով։ Լուսանկարում ցույց ե արված գյուղական հիդրոկայաններից մեկը՝ «Շաղիզեսը»։ Այցելուցի առջև են կաղրեր, վորոնք ցույց են տալիս եւեկտրովայական տեխնիկա։

Վոռոգման հետ մեկտեղ հսկայական աշխատանք ե տարված յերկիրն եւեկտրոֆիկացիայի յենթարկելու գծով։ Քարտեղի վրա տրված ե նորակառուցը հոռչոր հիդրոկայանների ցանցը։ Զորագետը՝ 22.320 կիլովատ կարողությամբ, Յերգեսը՝ 6.960, Լենգեսը՝ 5.280, Բանաքեռչինը՝ 88.000 և այլն։ Հայկական ԽՍՀ-ի եւեկտրոկայանների կարողությունը 1938 թվին կազմում եր 77,4 հազար կիլովատ՝ 1919 թվի 1,7 հազար կիլովատի գեմաց։

Ցերուրդ ստենդի նյութերը ցույց են տալիս Հայաստանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Մինչև հեղափոխությունը հողերի 70 տոկոսը պատկանում եր վանքերին, կալվածատերերին և կուլակներին։ Հեղափոխությունից հետո Հայաստանի աշխատավոր գյուղացիները անվճար և առհավետ ողտագործման համար ստացել են 2.494.000 հեկտար հող։

Արմատապես պոխվել ե Հայկական ԽՍՀ-ի գյուղատնտեսության ազգային կառուցելիքների մասնական համակարգով ցույց ե տրված նախահեղափոխական «ազգային կառուցելիքների»: Հողը մշակվում եր արորով, բերքահավաքը կատարվում եր գերանդիներով, կալսումը՝ կամքերով: Ցանքաշրջանառության, խոտացանության, շարքացանի, պարարտանյութերի ողտադրժան մասին վոչ մի հասկացողություն չունելին: Հայաստանի կոլտնտեսական դյուլացիությունը յուրացնում և արտադրության մեջ արմատացնում է առաջավոր ազգային գիտության նվաճումները: Ահա սոցիալիստական հողագործության ադրուտներին հիմնական ցուցանիշները 1937 թվին. 121,5 հազար հեկտար աշնանավար, 90,8 հազար հեկտար ցել, 70,7 հազար հեկտար շարքացան: Լայն կերպով կիրառվում ե բամբակի տրակտորացին կուլտիվացիա, յարովիզացիա, կոմբայնային բերքահավաք և առաջավոր ազգային գրանցությունը:

Հայկական ԽՍՀ-ում դյուլացիական տնտեսությունների 91,8 տոկոսն ընդգրկվել ե կոլտնտեսություններում: Ցանքային տարածության 95,5 տոկոսը պատկանում է կոլտնտեսություններին: Առաջավոր տեխնիկայով հագեցված 15 խորհանությունները հանդիսանում են որինակելի սոցիալիստական տնտեսություններ՝ ցեղական անասնաբուծության, պտղաբուծության, խաղողագործության և այլ ճյուղերի գծով: Հզոր տրակտորային պարկը և հազարավոր բարդ դյուլատանտեսական մեքենաներով սպառազինված 32 ՄՏ կայանները մշակում են կոլտնտեսային դաշտերը, արմատացնում են առաջավոր պետական գրանցության:

Դաշտի կենտրոնական մասի աջ կողմում դասավորված են նյութեր, վորոնք ցույց են տալիս ինդուստրիայի ծաղկումը Հայկական ԽՍՀ-ում: Ար-

դյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ 1938 թվին կազմում եր 72 տոկոս՝ 1913 թվի 21,7 տոկոսի և 1919 թվի 10 տոկոսի դիմաց: 18 տարվա ընթացքում Հայաստանի արդյունաբերական զինաբարության մեջ ներդրված ե 585 միլիոն ռուբլի: Նորագես ստեղծվել ե հանքային, քիմիական, բամբակեղենի, կոնսերվի, կառուչուկի և ցեմենտի արդյունաբերություն, շինանյութերի արտադրություն և այլն:

Կառուցվել են առաջալոր արդյունաբերական ձեռնարկություններ, վարոնք հաղեցված են տեխնիկայի վերջին խոսքի համաձայն: Կիրովականի քիմիական կոմբինատը, Դավալույի ցեմենտի գործարանը, Ալավերդու պղնձի կոմբինատը և այլն: Դիտողի առջևն ե 1939 թվին շարք մտնող սինթետիկ կառուչուկի գործարանի՝ քիմիական արդյունաբերության այլ գիգանտի կարբիտի ցեխի մակետը:

Իրագործելով կուսակցության դիրեկտիվն արդյունաբերական ձեռնարկությունները հումքի աղբյուրներին մոտեցնելու մասին, կառուցվել են սննդի ու թեթև ինդուստրիայի հզոր ձեռնարկություններ. Լենինականի տեքստիլ Փարբիկան, մսի կոմբինատը, ծիսախոտի գործարանը, կոնսերվի գործարանը Յերևան քաղաքում և այլն:

Սինթետիկ կառուչուկի, քիմիական պարարտանյութերի, պղնձի տեխնիկան առաջարտանությունը, առաջարտանությունը պարագաների համար առաջարտանությունը պարագաների առաջարտանությունը:

Ներածական-քաղաքական բաժնի յեղափակիչ թեման նվիրված ե հայ ժողովրդի ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կոլտու-

բայի ցուցադրմանը : Հայաստանը դառնում եւ Համատարած գրադիտության յերկիր : 1937 թվին բնակչության 93 տոկոսը գրադետ եր, մինչդեռ 1913 թվին գրադետ եր բնակչության 15 տոկոսը, իսկ 1919 թվին՝ 10 տոկոսը : Տասն անգամ աճել եւ տարրական ու միջնակարգ գպիրոցներում սովորողների թիվը : Ստեղծվել է իր արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան : Մինչև հեղափոխությունը Հայաստանում չկար վոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն : Խորհրդայնացումից հետո 8 բուհերը յերկրին տվել են 5.898 բարձրորակ մասնագետներ, այդ թվում 1.539 ագրոնոմներ, զոտեխնիկներ և անասնաբուժներ :

Ստեղծվել եւ դիտահետազոտական հիմնարկների լայն ցանց . ԽՍՀՄ Գյուղությունների ակադեմիայի ֆիլիալ, անասնաբուժության, դաշտավարության, խաղողագործության, պատրաստության փորձնական կայաններ, սեւեկցիոն կայաններ, տասնյակ հենակետներ շրջաններում և խորհնանեսություններում : Հարյուրավոր գիտական աշխատղներ սերտորեն կապված սոցիալստական գյուղատնտեսության հետ աշխատում են կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության բարձրացման վրա :

Մինչև հեղափոխությունը Հայաստանում չկար վոչ մի մշտական թատրոն : Խորհրդային իշխանության որոք ստեղծվել են Ռուբայի և բալետի պետական թատրոն, հայկական, ոռուսական, աղբյուրական, քրդական դրամատիկ թատրոններ և տասնյակ հրանային թատրոններ : Ակադեմիկա-թատրոնը թամանյանի նախադոլ շերեկան քաղաքում ավարտվում է Ռուբայի և բալետի Սպենդիարյանի անվան պետական թատրոնի շենքի շինարարությունը : Պալիլիոնի դահլիճում ցուցադրվում ե այդ շենքի մակետը :

Ստեղծվել եւ կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց . 531 գրադարան, 484 ակումբ, հնչյուն կինոսեր, թանգարաններ և այլն : Բուժական ու սանիտարական հիմնարկների լայն ցանցը սպասարկում ե բնակչությանը : 1938 թվին Հայաստանում գործում ելին 72 բուժական ստացիոնար հիմնարկների 2.691 մահճականներով՝ 1913 թվի 17 հիմնարկների և 178 մահճականների դիմաց :

Խոչոր չափով զարգացել ե Փիզկուլտչարժումը . 22.000 Փիզկուլտուրներին պարագում են 536 խմբակներում : Հայկական ԽՍՀ-ի Փիզկուլտուրներին թվումն են համաշխարհային ու կորդամեններ—ծանր ատլետներ Համբարձումյանն ու Մանուկյանը :

Դահլիճի կենտրոնական մասի վերջին ստենդը հատկացվել է ժողովրդական ստեղծագործության եքաղոնատներին : Իր ամբողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը հորինել է շնորհալի յերգեր, լեզենդներ, զրույցներ : Հայ ժողովրդի նշանավոր եպոս «Սասունցի Դավիթ» այժմ դառնում ե վոչ միայն Հայաստանի, այլև Խորհրդային Միության բոլոր յեղայրական հանրապետությունների աշխատավորների սեփականությունը : Միայն Խորհրդային իշխանության որոք սկսվեց հայ ժողովրդի բազմակողմանի ստեղծագործության իսկական ծաղկումը, ժողովուրդ, զորն աղատագրվել և դարավոր ճնշումից ու ստրկությունից :

Մետաքսի, արծաթի, պղնձի վրա կատարված գեղարվեստական աշխատանքների նմուշների կողքին ցույց են տրված գորդի լավագույն վարպետների աշխատանքները : Կոմունիստական կուսակցության և նրա մեծ առաջնորդ ընկեր Ստալինի նկատմամբ անսահման սիրով ու նվիրվածությամբ են համակված ժողովրդական վարպետների լավագույն

ստեղծագործությունները։ Ահա մի դորդ ընկեր Ստալինի պորտբեյով, դորդեր ընկեր Ստալինի մերձավոր զինակիցներ՝ ընկերներ Մոլոտովի ու Միկոյանի պորտբեներով։

Աշխատավորների մեծ առաջնորդներ լենինին ու Ստալինին են նվիրել իրենց լավագույն ստեղծագործությունները ժողովրդական յերդիչները — աշուղները։ Ծաղկող հայրենիքի մասին, յերջանիկ կյանքի մասին են յերդում Հայաստանի աշուղները։



## ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ — ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-Ի ԳՅՈՒՂԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՃՅՈՒՂՆ Ե

Այս բաժնի եքսպոնատները տեղավորված են գլխավոր գահինձի աջ կողմում։ Հայկական բնորոշունամենատներով թեթև սյունաշարը բաժանում է այս մասը գլխավոր գահինձի կենտրոնական մասից։ Խաղողագործությունն ու գինեգործությունը հայ ժողովրդի հնագարյան զբաղմունքն ե։ Պրիմիտիվ տեխնիկան, խաղողի այդիների ցրվածությունը, մանր, տնայնագործական յեղանակի գինեգործությունը, աշխատավորության զաժամ շահագործումը հանդիսանում ելին նախահեղափոխական խաղողագործության բնորոշ առանձնահատկությունները։ Իմակերպարհատական պատերազմի ժամանակաշրջանում խաղողի այդիների տարածությունը և դինուկոնյակի արտադրությունը համարյա թե վուշնչի հալասարվեցին։ Գյուղատնտեսության սոցիալականացուցանում վերակառուցումն ապահովեց Հայկական ԽՍՀ-ի խաղողագործության բուռն զարգացումը։ Խաղողի այդիների տարածությունն աճեց և 1938 թվին հասավ մինչև 13,9 հազար հեկտարի՝ 1919 թվի 4,2 հազար հեկտարի դիմաց։ Խաղողի այդիների համար ողտագործվել ե 1.882 հեկտար անուշաղը բարեկարգ մատնված կիսանհապատային հողեր։ Լայն կերպով կիրառվում ե նոր ագրոտեխնիկան (ելեկտրոպալանտաժ, միջարային խնամքով

մշակում, քիմիական պալարտացում, պայքար հերվանդությունների ու վնասատունների դեմ), փորը բարձրացնում է խաղողի բերքատվությունը հեկտարից մինչև 75 ցենտների՝ 1919 թվի 45 ցենտների դիմաց:

Ստենդի վրա ցույց են տրված տեղական խաղողի կարեռագույն տեսակները և արտադրության մեջ արմատացվող յեկրտպական տեսակները: Այս-տեղ են խարչի խաղողի շաքարով առատ խիտ վողկույզները, մսխալի և ասկյարի խաղողների լուսաթափանց ճութերը, քիչմիշի գեղին, վարդագույն, սև ու սպիտակ անկորիզ տեսակները, ճիլար, հաչարաշ և այլն: Ցույց են տրված մասսայական արտադրության մեջ արմատացվող յեկրտպական լալագույն տեսակները — մուսկատ, սերսիալ, ֆուրմինդ, սեմիլիփոն:

Տնայնագործական յեղանակով խաղողը վերամշակելու փոխարեն կազմակերպվել ե գինու-կոնյակի: Հզոր արդյունաբերություն: Կառուցվել են գինու-կոնյակի մեխանիզացիայի յենթարկված 12 խոչը գործարաններ: Մակետների ձևով ցույց ե տրված խաղողի վերամշակման հին տնայնագործական յեղանակը և առաջավոր տեխնիկայով սպառագինված ու մեխանիզացիայի յենթարկված գինու-կոնյակի նոր գործարանը՝ մեկն այն 12 գործարաններից, վորոնք 1938 թվին տվել են 1.170,0 հազար դեկալիտր գինի՝ 1913 թվի 187 հազարի և 1919 թվի 10,5 հազարի դիմաց: Ցուցադրվում է գինու-կոնյակի արդյունաբերության արտադրանքը՝ բարձրորակ գինիների ու կոնյակների զանազան տեսակներ:

Տիրապետելով առաջավոր աղբոտեխնիկային, շայկական ԽՍՀ-ի կոլանտեսություններն ու խորհությունները ստանում են խաղողի բարձր և կայուն բերք: Այս բաժնում ցույց են տրված խա-

ղողագություն լավագույն տնտեսությունների և առաջավորների նվաճումներն ու աշխատանքի մեթոդները:

Բաժնի առաջին ստենդը հատկացված է Արարատ-տրեստի № 3 խորհութեսության եքսպոնատներին: Այդ խորհանտեսությունը իրավացիորեն համարվում է մեխանիզացիայի յենթարկված այնպիսի խոչը տնտեսության որինակ, փորը յուրացրել և առաջավոր աղբոտեխնիկան և գիտության նվաճումները: Խորհանտեսությունը ծառայում է վորպես բազա բարձրորակ վինիների արտադրության համար: Խորհանտեսությունն ունի 104 հեկտար բերանու և 144 հեկտար յերիտասարդ այդիներ: Բնական նմուշները ցույց են տալիս խորհանտեսության խաղողի ասորտիմենտը: Տեղական թանկարժեք տեսակների հետ մեկտեղ (խարչի, ճիլար) խորհանտեսությունը յուրացնում է նոր յեկրտպական տեսակներ (մուսկատ, սեմիլիփոն, սերսիալ գեմադերա և այլն): Սակալարժեք տեսակները պատվաստման միջոցով փոխարինվում են նոր տեսակներով:

Խորհանտեսությունը 1938 թվին 104 հեկտար տարածությունից ստացել է 65-ական ցենտներ բարձրորակ խաղող: Պահպանելով յերիտասարդ տունկերի 95 տոկոսը, խորհանտեսությունը ստացել է վաղերի 75 սանտիմետր միջին տարեկան աճ:


Առավել աշխատատար պլրացեսսների մեխանիզացիան, առաջավոր աղբոտեխնիկայի յուրացումը, ուշաղիքի խնամքը և աշխատողների հոգատար վերաբերմունքը բույսերի նկատմամբ ապահովեցին այդ տնտեսության հաջողությունը:

Գեղատեսիլ պահնոն ցույց ե տալիս խորհանտեսության խաղողի այգիները՝ առատ բերքի հաշվարման մոմենտին:

Խորհանտեսությունը կիրառում և խաղողագործության առաջավոր տեխնիկա, կատարում է 70—90 սանտիմետր խորությամբ պլանտաժ՝ բարդ ելեկտրոդութաններով։ Խաղողի այդինքը քամիներից պաշտպանելու համար աճեցնում է բրդաձև բարդենիների, թթենու և գլեզիչայի տունիների շարքեր։ Խորհանտեսությունն անցել է շպալերացին սիստեմին և թվերի հովհարային ձևավորմանը, վորոնք հնարավորությունն են տալիս մեխանիզացիայի յենթարկել միջարային մշակումը և խաղողի վաղերի խնամքը։ Տրակտորային գութաններով գարնանը կատարվում է միջարային հերկում՝ 14—16 սանտիմետր խորությամբ։ Տրակտորային հզոր կուլտիվատորները փոխացնում են խաղողի այդիների շարքերի միջի հողը։

Խաղողի թփերի աճումն ուժեղացնելու համար նրանք աղատվում են ալելորդ վաղերից և յերես արմատներից։ Լայն կերպով կիրառվում է հանքային և աղբային պարարտացումը։ Սուպերֆոսֆատ արվում է հեկտարին 4,4 ցենտներ, սուլֆատ ամմոնիյ՝ հեկտարին 4 ցենտներ։ Սեղոնի ընթացքում, նայած հողային պայմաններին, խաղողի այդիները 6—10 անգամ չըլում են՝ շարքերի մեջ համատարած ջուր բաց թողնելու կարգով։

Խորհանտեսության աշխատողները խոշոր ուշագրություն են գարձնում խաղողի հիվանդություններն ու վնասատուները կանխելու և նրանց դեմ պայքարելու դործին։ Մայիսին և հուլիսին ձիու, մոտորային և արակտորային սրսկիներով խաղողի այդիները սրսկովում են բորբոքան հեղուկով։ Սեղոնում յերկու անգամ խաղողի թփերը փոշոտվում են ծծումքով։ Բացի դրանից հունիսին վաղերը



Արարատի տրեստի № 3 խորհսնական ստեմդը։


սրսկվում են անաբաղին - սուլֆատով և նիկոտին-սուլֆատով:

Խորհութեսությունը հիանալի խաղող և մատակարարում գինեգործարանին: 1938 թվին հանձնված է 6.329 ցենտներ (88 տոկոս) առաջին տեսակի և միայն 919 ցենտներ (12 տոկոս) յերկրորդ տեսակի խաղող: Բնական նմուշներով ցույց ե տրված խորհութեսության առատ և բարձրորակ բերքը, տեղական ու յերկրոպական տեսակների խաղողի հյութալի վողկույզներ և նրա վերամշակված արտադրանքը՝ հիանալի դինեների հարուստ ասոր-տիմենտ:

Լայն կերպով ցույց ե տրվում Ղամարլույի շըրջանի «Փարիզյան կոմունա» միլիոնատեր կոլտընտեսության աշխատանքը: Այդ կոլտնտեսությունը 1938 թվին 181 հեկտարից ստացել է 125-ական ցենտներ խաղող՝ ցուցահանդեսին մասնակցելու համար սահմանված 65 ցենտներ ցուցանիշի դիմաց: 1938 թվին կոլտնտեսությունը պետությանը հանձնել է 1.664 տոննա խաղող — պլանի 330 տոկոսը: Կոլտնտեսության համախառն յեկամուտը 1937 թվին յեղել է 1.377 հազար ոուրլի, 1938 թվին՝ 2.700 հազար ոուրլի: Միայն խաղողագործությունից կոլտնտեսությունը 1938 թվին ստացել է 1.932 հազար ոուրլի:

Մեծ ֆոտո-պանոյի վրա ցույց են տրված կոլտնտեսության այն առաջավորների աշխատանքի մեթոդները, վորոնք ստացել են ոեկորդային բերք: Այցելուն տեսնում ե կայուն և ոեկորդային բերքն ապահովող ագրոտեխնիկական բոլոր հիմնական միջոցառումները. դարնանային խորը փորումը, այդու ժամանակին ետումը, ջրումը, ամառային հատումը և այլն:

Կոլտնտեսությունը հատուկ ուշադրություն ե դարձնում խաղողի այգիների հիմանդրությունները



«Տարած կոլտնտեսությունը կտևարություն, բատու-բատությունը՝ առնելի կողմանությունը»  
ԽՈՐՀԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

կանխելու միջոցներին։ Սեղոնի ընթացքում խաղողի այդիները յերեք անգամ սրսկվում են բորբոյան հեղուկով։ Ոիդփումի դեմ պայքարելու համար խաղողի թվերը փոշոտվում են ծծումբով։

Հեկտարից 125 ցենտներ կոլտնտեսության ստացած ըերքը գեռնես սահման չէ։ Դրա մասին ե խոսում լավագույն առաջավորների փորձը։ Որինակ ողակավար ընկ. Սարգսյանը 5 հեկտարից ստացել է 172-ական ցենտներ խաղող։

Կողովներում ցուցադրվել են կոլտնտեսության բնական երսպնատները — հյութալի և անուշահամ խաղող, թարմ պտուղներ, զանազան տեսակի չոր մրգեր, պտուղներից ու խաղողից վերամշակված մթերքներ։

Ունեոր, կուլտուրական կյանք են վայելում «Փարիզյան կոմունա» կոլտնտեսության անդամները։ Անցյալ տարվա համեմատությամբ կրկնապատկվել են կոլտնտեսականների յեկամուտները։ 1938 թվին կոլտնտեսականները յուրաքանչյուր աշխորին ստացել են 18 ոռոքի դրամ, 3,5 կիլո-դրամ խաղող և բազմաթիվ այլ մթերքներ։ Կուտընտեսությունը կառուցել ե նոր ակումբ 800 մարդու համար, տրանսֆորմատորային յենթակայան, բամբակի չորանոցներ։ Կոլտնտեսությունն ունի իր գոլրոցը, գրադարանը, ակումբը, ստագիոնը և խրճիթ-լաբորատորիան, վորն աշխատում ե կոլտնտեսային այդիների ու դաշտերի բերքարվության հետագա բարձրացման համար։

Նրա կողքին Վաղարշապատի շրջանի «Պայքար» կոլտնտեսության ստենդն ե։ Այս կոլտնտեսության որինակով ցույց ե տրված յերիտասարդ այգու խնամքի առաջավոր ագրոտեխնիկան։ Կոլտնտեսությունը տնկել ե 28 հեկտար խաղողի նոր յերիտասարդ այգիներ։ 2,2 հեկտար տարածությամբ

հատուկ հողամասում աճեցվում են 200 հազար տունկեր՝ խաղողի նոր այդիներ տնկելու համար։

Ֆոտո-պաննոյի վրա այցելուն տեսնում ե, թե ինչպես ե կատարվում հողի մշակումը, գարնանային խորը փորումը և միջջարային բաղմապատիկ քաղցանը, ինչպես ե պարարտացվում հողը կոմպոստով (հեկտարին՝ 55 տոննա) և սուլղերֆոսֆատով (հեկտարին՝ 0,5 տոննա)։ Խաղողի թվերը ձմռան ամիսներին թաղվում են՝ սառնամանիքներից պաշտպանելու համար։





## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-Ի ՊՏԾԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գլխավոր դահլիճի ձախ մասում տեղավորված են պաղաբուծության բաժնի եքսպոնատները, վորոնք ցույց են տալիս, թե ինչպես Հայաստանի բուշկիկները գործով կիրառում են բնության մեծ բարեփոխիչ ի. վ. Միջուրինի գեկիզը՝ «Մենք չենք կարող բնությունից դժմարառություն սպասել, մեր խնդիրն է այն վերցնել բնությունից»:

Մինչև հեղափոխությունը Հայաստանի պաղաբուծության մեջ տունկերի ավելի քան 80 տոկոսը գտնվում եր ½ հեկտարից պակաս տարածությամբ հողակտորներում: Գերակշռում ելին սակավարեք տեսակները: Իերքն անկայուն ու ցածր եր: Դաշնակների տերապեսության ժամանակաշրջանում պաղատու այդիները կրծատլեցին և հասն մինչև 1,5 հազար հեկտարի՝ 1913 թվի 4,4 հազար հեկտարի դիմաց:

Միայն խորհրդայնացումից հետո յե սկսվում Հայկական ԽՍՀ-ի պաղաբուծության վերականգնումն ու բուռն զարգացումը: Ստալինյան յերկու հնգամյակների ընթացքում պաղատու այդիների տարածությունն ավելացավ 883 տոկոսով (մինչև 14 հազար հեկտար): Պաղատու այդիների 60,7 տոկոսը գտնվում է սոցիալիստական սեկտորում:

Կաղմակերպվել ե պետական ու կոլտնտեսային տնկարանների լայն ցանց, վորոնք տարեկան բաց են թողում հարյուր հալարավոր տուններ: Միջունյան արժեքավոր տեսակները լայնորեն արմատացվել են լեռնային շրջաններում: Ծաղկող այդիները տարածվել են Ալաղյալի բարձունքի լանջեները տարածվել են Ալաղյալի բարձունքի լանջեներին, դաժան կլիմա ունեցող շրջաններում, այնեղ, ուր առաջ չելին աճում պաղատու ծառեր:

Սոցիալիստական պաղաբուծության բազայի վրա ստեղծվել ե առաջավոր տեխնիկայով հագեցված կոնսերվի հզոր արդյունաբերություն: 1938 թվին այդ արդյունաբերությունը ավել է 18 միլիոն բանկա բարձրորակ կոնսերվաներ:

Ցուցադրված է Հայկական ԽՍՀ-ի սոցիալիստական պաղաբուծության արտադրանքը՝ բնական պաղաբուծության արտադրանքը՝ նարինչի, զաֆրանի հոչաբարձրակ պլուղներ՝ նարինչի, զաֆրանի ծիրանների կավոր գեղձեր, խոչոր և անուշահամ ծիրանների կավոր գեղձեր, խոչոր և անուշահամ ծիրաններ, հայտնի հարածելու համար, հայտնի հարածելու համար, հասնում են կայուն և սեկորդային բերքի:

Եքսպոնենտների մեջ առանձին հետաքրքրություն են երկայացնում կոնսերվարեստի № 3 խորհանտեսությունը: Ստենդի վրա այցելուն տեսնում է այդ խորհանտեսության գեղատեսնիլ պաննոն, նրա պլուղամակները, հայտնալի զարգացած գեղձի ու զատու այդիները գեղցիցի շարքերը: Մրգի ծանրուծիրանի ծառերի գեղցիցի շարքերը: Հավաքվում ե թյունից կորացել են ձյուղերը:

Հնդկամենը մի քանի տարի առաջ այս խորհանտեսության տեղում Սարդարաբաղի անապատի մերկ ավազն եր: Ալաղյի ու քարերի մեջ աճում եր միայն ուղտի խոտ: Ամբողջ տարվա ընթացքում

այստեղ տեղում են 250 միլիմետրից վոչ ավելի  
մինչուրտային տեղումներ։ Կառուցված Սարդա-  
րապատի խոչըր կանալը ջուր տվից անապատի ցա-  
մաքած և աղոտված հողերին։ Եկրանի վրա այցե-  
լուն տեսնում ե սովորակեղ անապատը հաղթողների  
և խորհութեան ծաղկող այգիները ստեղծող-  
ների հերոսական աշխատանքը։


Տարածության ընդհանուր խորը պլանտաժից հետո հարթվել է գետախնը և ապա փորվել են փոսեր ծառեր տնկելու համար։ Մառերը տնկելիս փոսերը լցվել են խակական հողամասից տեղափոխված հողով։ Այնուն տարի մարտին և նոյեմբերին կատարվում ե միջարային խճամքով փխրացում։ Լայն կերպով կիրառվում են հողի խոնավությունը պահպանելու միջոցառումները։ Որինակ, 1938 թվականի հոդի խոնավությունը պահպանելու միջոցառումներ կիրառվել են 425 հեկտար տարածության վրա։

Սեղոնի ընթացքում պտղատու ծառերը 3 անդամ սրսկվում են բորդոյան հեղուկով և 2 անդամ՝ անարազին-սուլֆատով:

Գարնանը կատարվում և ծառի ճյուղերի մաք-  
րումն ու ձևալորումը։ Խորհանտեսությունում լն-  
դունված և ծառերի թասային և լիղերային ձևավո-  
րումը։

Զնայած բնության դաժան պայմաններին, № 3 խորհության տեսության աշխատողները պահպանել են յերիտասարդ տունկերի 95 տոկոսը և հասել են յերիտասարդ շիվերի 50—60 սանտիմետր տարեկան միջին աճի: Բազմաթիվ ծառեր արդեն մտել են պտղաբերության շրջանը և տալիս են հիանալի անուշահամ պտղուղներ:

Խորհուտեսության բիլիպադիր ընկ. Հովհաննիս-  
յանը 73 հեկտար տարածության վրա պահպանել և  
յերիտասարդ տունկերի 99,6 տոկոսը և ստացել է  
յերիտասարդ չիվերի տարեկան 60 սանտիմետր



Կանսերվորթստի № 3 խորհումնեսուրյան ստենդը:  
3 ԱՐՄԵՆՈՒԹՅ.

աճ։ Հարությունյանը 23 հեկտար տարածությունից ծառերի պտղաբեղության առաջին տարվա ընթացքում ստացել է հեկտարից 29 ցենտներ դեղձ, չի չորացրել վոչ մի յերիտասարդ տունկ և ստացել է մեկ տարեկան շիվերի 90 սանտիմետր միջին աճ։

Խորհանութեալթյան արտադրանքը լայն կերպով ցուցադրված է բնական նմուշներով:

№ 3 խորհանտեսության աշխատանքի վորձը կողմէ անապատային վիթխարի տարածությունների յուրացմանը վոչ միայն Հայաստանում, այլև յեղբարյական մյուս հանրապետություններում:

Հայկական ԽՍՀ-ի պտղաբուծության բնագավալաւում աշխատողների առաջ հերթի յե դրված մի հոյակապ խնդիր — յուրացնել ՄԵծ Սարդարաբագի 200.000 հեկտար անապատային հողերը։ Այդ անապատի մոռայլ ավաղների տեղում չուտով կտարածվի հսկայական ծաղկող այգի, վորը Խորհուրդների Յերկրի աշխատավորներին կտա հազարավոր տոննա հրաշալի մրգեր։

Յեթե Նէ Յ խորհանտեսության աշխատողներին  
կարելի յե անվանել անապատի հաղթողներ, ապա  
Մեղրու վրձանի «Նոր կյանք» կոլտնտեսության  
առաջավորներին կարելի յե համարել լեռների նվա-  
ճողներ: Այս կոլտնտեսությունը գտնվում է իրանի  
սահմանի լեռներում: Նա միացնում է 225 տնտե-  
սություն և ունի ընդամենը 145 հեկտար հող: Պտղաբուծության բաժնի յերկրորդ ստենդը ցույց  
ե տալիս այս կոլտնտեսության աշխատանքը:

«Նոր կյանք» կոլտնտեսությունը 1987 թվին ստացել ե հեկտարից 158 տեսաներ, իսկ 1988 թվին՝ հեկտարից 150 տեսաներ բարձրորակ դեղճ։ Առաջին հանդի բրիգադիր բնկ։ Մուրադյանը 1987 թվին յուրաքանչյուր հեկտարից ստացել ե 200 տեսաներ, իսկ 1988 թվին՝ 240 տեսաներ սալամի և

զաՓրանի բարձրորակ դեղձ : Տեղորդ բրիգադայի ողակավարուհի լինել . Մանուկյանը 1,5 հեկտար այդուց 1937 թվին ստացել է 209 ցենտներ, իսկ 1938 թվին՝ 225 ցենտներ գյուղադիմի, սալամի և զաՓրանի դեղձ :

«Նոր կյանք» կոլտնտեսությունը ստացել ե խաղողի բարձր բերք և յուրացրել ե նաև արախիսի կուլտուրան։ 1938 թվին 5,5 հեկտար տարածությունից ստացել ե հեկտարից 22 ցենտներ արախիս։ Կոլտնտեսությունում որինակելի կերպով կազմակերպվել ե շերամապահությունը։ 1938 թվին 175 տուփ գրենայից կոլտնտեսությունը ստացել ե 10.414 կիլոդրամ բոժոք՝ 104.715 ռուբլի գումար։

Տարեց տարի աճում են կոլտնտեսության յիկա-  
մուտները և կոլտնտեսականների աշխորի արժեքը:  
1938 թվի ընթացքում յուրաքանչյուր աշխատու-  
նակ կոլտնտեսական միջին հաշվով վաստակել է  
300 աշխոր: Միայն գրամով կոլտնտեսականները  
ստացել են 1935 թվին՝ 7 ռուբլի 21 կոպեկ, 1936  
թվին՝ 10 ռուբլի 35 կոպեկ և 1937 թվին՝ 12  
ռուբլի 10 կոպեկ:

Պալպառուծության բաժնի վերջին ստենդի վրա ցույց են տրված յերիտասարդ տունկերը խնամող առաջավորների նվաճումներն ու աշխատանքի մեթոդները : Այստեղ ցուցադրված են Շահումյանի անվան մերձգաղաքային կոլտնտեսության եքսպոնատները : Այս կոլտնտեսությունը 15 հեկտար տարածության վրա պահպանելով նորատունկերի 97 սոռները, ստացել ե յերիտասարդ շվիերի 55—60 սանտի-մետր աճ : Հսկայական Փոտո-պանոնյի վրա ցույց ե տրված կոլտնտեսային այգու ընդհանուր տեսարանը : Ցուցադրվում են նորատունկերի խնամքի մեթոդները : Հողի խնամքով մշակումը, տունկերի մերձնային շրջանների յեռապատիկ փորումը,

գոմաղբով պարարտացումը և այլ ազրոձեռնարկումներ, վորոնք ապահովում են յերիտասարդ տունկերի պահպանումը:

Կոլտնտեսությունը հասել ե բարձր ցուցանիշների նաև խաղողագործության, բանջարաբուծության և առվույտի գծով:

Նշանակալից ե այս կոլտնտեսության պատմությունը: Երա անդամները Ծյուրքիայի Արեշ դյուզի նախկին բնակիչներ են, վորտեղից նրանք ստիպված են իմպերիալիստական պատերազմի տարիներին դադթել Յեվրոպա: Նրանցից շատերն այնտեղ չկարողացան աշխատանք դտնել և մի կերպ քարշ են տալիս գաղթականների լողակները: Հայաստանում Խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո արեցիները շտապեցին Խորհրդային Հայաստան: Խորհրդային կառավարության ոժանդակությամբ նրանց յերազն իրադրվեց: Յերեան քաղաքի մոտ նրանք կազմակերպեցին մի ավան՝ տալով նրան Նոր Արեշ անունը: Այստեղ, Խորհրդային Հայաստանում, նրանք դտան իրենց իսկական հայրենիքը և կոլտնտեսության մեջ միացած կառուցում են իրենց ուրախ ու յերջանիկ կյանքը:



## ՀԱՅԿԱՆ ԽՍՀ-Ի ԱՆԱՍՆԱԲՈՒԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Պավիլիոնի յերկրորդ դահլիճում տեղափորված են անասնաբուծության եքսպոնատները: Հայկական ԽՍՀ-ն հարուստ ե լեռնային ալպյան մարդագետիստներով և արոտավայրերով: Այդ հնարաւորություն ե տալիս լայնորեն զարգացնել հանրապետության անասնաբուծությունը: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման տարիների ընթացքում 1919 թվի համեմատությամբ ձիերի քանակն ավելացել է  $2\frac{1}{2}$  անգամ, վոչխալների և խոչոր յեղջյուրավոր անսառնների գլխաքանակը կրկնապատկվել է: Հայկական ԽՍՀ-ում գոյություն ունեն 693 կաթնապրանքային, 517 վոչխարաբուծական և 364 ձիաբուծական կոլտնտեսական ֆերմաներ: Տեղական սակավ մթերատու անսառները բարելավվում են բարձր մթերատվությամբ կուլտուրական ցեղերով: Լայն կերպով կիրառվում ե անսառնների արհեստական սերմնայինումը՝ խորհրդային առաջավոր զոտուելինիկական գիտության նվաճումը: Միայն 1938 թվին արհեստականորեն սերմնավորված են 254 հազար գլուխ մանր յեղջյուրավոր և 9.100 գլուխ խոչոր յեղջյուրավոր անսառներ:

Դահլիճի առաջին ստենդը հատկացվել է ձիաբուծության հաջողությունների ցուցադրմանը: Զիերի


Կլինաքանակը 1919 թվի 19.900-ից աճել է  
1938 թվին հասել եւ մինչև 53.600-ի:

Հանրապետության լավագույն ձիաբուծական ֆերմաներից մեկի՝ Մայիսի 1-ի անվան կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի որինակով ցուցադրվում են Հայաստանի առաջավոր ձիաբույժների հաջողությունները։ Ֆերման ունի 38 դամբիկ և 83 մարուկ։ Ֆերման հասել եւ զամբիկների հարյուրականության և մատղաշների լիովին սկսած առանձան։ Մի շարք լուսանկարներ ցույց են տալիս կոլտնտեսության լավագույն ձիաբույժների աշխատանքի մեթոդները։

Հետեւյալ ստենդը հատկացված է վոչխարաբուծության մասնիկի վերեկի մասը զբաղված է վոչխարների հոտը ցույց տվող մեծ ֆոտո-պաննոյով։ Հեռվում յերեսում են լեռնային զանդվածներն ու արգավանդ արոտավայրերը։

Բերված են Հայաստանի վոչխարաբուծության զարգացման ընդհանուր տվյալները։ 1919 թվի 471 հազար վոչխարի փոխարեն այժմ Հայկական ԽՍՀ-ում կա 1.197 հազար վոչխար։ 1937 թվին 517 վոչխարաբուծական ֆերմաներում կար 355 հազար գլուխ վոչխար։ Հսկայական աշխատանք է կատարված վոչխարաբուծության վորակը բարելավելու համար։ Միայն 1938 թվին 130 հազար տեղական մաքիներ ծածկվել են ցեղական խոյերով։ 1938 թվին 140 կետերում արհեստականորեն սերմանավորված է 254 հազար մաքի։

Մոլոտովի անվան կոլտնտեսության վոչխարաբուծական ֆերմայի լավագույն վոչխարաբուծական ֆերմաներից մեկի փորձը ցույց եւ տալիս, թե Հայաստանի կոլտնտեսականներն ինչպես են կատարում ընկեր Ստալինի կողմից կուսակցության XVIII համագումարում զրված խնդիրը — մոտակա 3—4 տարիների ընթացքում կրկնակի ավելացնել վոչ-



Կիրովականի շրջանի Մայիսի 1-ի անվան կոլտնտեսության ստենդի կենտրոնական մասը։


Խարճների դլխաքանակը : 783 վոչխարճներից կուտընտեսությունը ստացել է 877 դառ և մինչև կաթեց կտրելու մոմենտն ածեցրել է 874 դառ : Վոչխարճների դլխաքանակը ֆերմայում 1935 թվի 471-ից աճել և 1938 թվին հասել է մինչև 2·043-ի :

Վոչխարճների ամբողջ դլխաքանակն աղահովված է վերջերս կառուցված տիպային վոչխարճնոցներով : ՎԱՖ-ի համար առանձնացվել է կոշտ, խոտացրած և հյութալի կերերի հատուկ ֆոնդ :

Հուսանկարները ցույց են տալիս վոչխարաբուծության առաջավոր տեխնիկան, վորապիսին տիրապետելով կոլտնտեսականները հասել են բարձր ցուցանիների : Ծնելուց առաջ 2 ամսվա ընթացքում մաքիներն ի լրումն սովորական ռացիոնի ստանում են 250-ական գրամ խոտացրած կեր : Ծինն ընդունվում ե առանձնահատուկ տաքացվող ծնարաններում :

Ֆերման տեղական սակավ մթերատու մաքիները բարելավում ե սամբուլյե խոյերով և աճեցնում է տեղական արժեքավոր բալբաս ցեղի վոչխարճեր : Այս ֆերմայում մաքիները սերմնավորվում են միայն արհեստականորեն :

Մոլոտովի անվան կոլտնտեսության ֆերման արտադրական բարձր ցուցանիներով և յեկել Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդես : Յուրաքանչյուր 100 մաքուց կոլոնտեսությունը ստացել է 112 դառ և պահպանել է 111 դառ : Սակայն ֆերմայի լավագույն առաջավորներն անցել են այդ ցուցանիներից . ՎԱՖ-ի հովիլ ընկ . Մանուկյանը 1937 թվին մետիս-մաղեխ և ռամբուլյե ցեղի 180 մայր վոչխարճներից ստացել է 230 դառ, 1938 թվին 260 մայր վոչխարճներից 265 դառ : Բոլոր գառները նա պահպանել ե մինչև կաթեց կըտրելու մոմենտը : Յուրաքանչյուր մայր վոչխարից



Գոտո-պանոն Մարտունու շրջանի՝ Մոլոտովի անվան կոլտնտեսության ստենիլի վրա :

Գերմայում ստացվել է 1937 թվին՝ 113 կիլոգրամ  
կաթ, իսկ 1938 թվին՝ 92 կիլոգրամ:

Սնասնաբուծության գահվճում կենտրոնական տեղ է գրավվում կաթնատու անսանաբուծության ստենդը: Հսկայական զեղատեսիլ պաննոյի վրա ցուցադրված է բարձր մթերատվությամբ կաթնատու կովերի նախիրն ալպյան արգալանդ արտավայրերում արածելիս: Հեռվում, լեռնաշղթաների Փոնի վրա, յերեսում են կաթնապրանքային ֆերմայի արտադրական չենքերը, տիպային գոմերը:

Ապողության մեջ կազմակերպությունը համար աշխատանք է տարիվում կերպույթի տարածությունն ընդարձակելու և արժատավայրության մեջ ու սիրուային կուլտուրաների արտադրությունն ավելացնելու գծով։ Հայկական ԽՍՀ-ի անասնաբուծության բնական կերի բազան բաղկացած է 603 հազար հեկտար ամառային արոտավայրերից, 141 հազար հեկտար խոտհարքներից, 158 հազար հեկտար ձմեռային արոտավայրերից և 678 հազար հեկտար արոտներից։ Բացի դրանից, 1938 թվին կերի կուլտուրաներով զբաղված եր 33.280 հեկտար տարածություն։

1938 թվին նսչող յեղջուրավկոր անսառունների գլխաքանակը հասցվել է մինչև 711 հազարի՝ 1919 թվի 294 հազարի դիմաց։ 693 կոլտնտեսական ֆերմաներում հաշվվում են 124,4 հազար գլուխ անսուն։ Կաթնապրանքային ֆերմաները գալձել են անսանաբուծության վորակը բարելավելու հիմնական բաղա։

Տարեց տարիի ընդարձակվում և անասունների մետիսացումը՝ գլխաքանակի վորակական բարելավման այդ հիմնական մեթոդը։ Միայն 1938 թվին մետիսացվել է 130 հազար գլուխի խոչը յեղջյուրավոր անասուն։ Տեղական սակավ մթերատու կողերը ծածկվում են շվեյ և սիմենտալ ցեղի արագողներով։

Լուսանկարով ցույց են տրված Խորհրդային իշխանության գոյության տարիների ընթացքում ստեղծված պետական ցեղական անասնաբուծության ոչափանակը. Լոռու ցեղական տնտեսությունը, վորն ունի ավելի քան հազար գլուխ բարձր մթերատվությամբ ցեղական անասուններ, և Ստեփանավանի ցեղական բուծարանը, վորն ընդգրկում է 17 ցեղական ֆերմաներ 7.900 գլուխ անասուններով: Նրանք խոչը աշխատանք են կատարում տեղական պայմաններին հարմարվող բարձր մթերատվությամբ կաթնատու անասուններ ստեղծելու գծով:

Կաթնատու - անասնաբուծության ստենդի վրա ցուցադրված են Լոռու բուծարանի յերկու լավագույն եղալիքն Փերմաների՝ Ստեփանավանի ըլլչանի՝ Ստալինի անվան կոլտնտեսության ԿԱՖ-ի և Կալինինոյի շրջանի «Կոլեկտիվ աշխատանք» կուտրնտեսության ԿԱՖ-ի եքսպոնատները :

Ստալինի անվան կուլտնտեսությունն որինակելի կերպով կազմակերպել ե անասնաբուժությունը և կաթնատնտեսությունը: Մտենդի վրա ցուցադրված է կուլտնտեսության 8-դաշտյան ցանքաշրջանառության քարտեղը: Ցանքաշրջանառության մեջ խոշոր տեղ են գրավում կերպ կուլտուրաները — կլիվեր, վիկա, արմատապուղներ: Մի շարք լուսանկարներ ցույց են տալիս կոլտնտեսության անասնաբուժության բազմակողմանի զարդացումը — կաթնատնտեսական, ձիաբուծական, խողաբուծական ապրանքային ֆերմաները և մեղվանոցը:

Ստենիկ կենտրոնում դրված ե կաթնապրանքա-  
յին Փերմայի, նրա արտադրական շենքերի ու տի-  
պային գոմերի ընդհանուր տեսարանի մակետը:  
Կոլտնեեսությունն ունի 22 տիպային գոմ՝ 800  
գլուխ խոցոր յեղջուրավոր անասունների հա-

ժար և 8 հորթանոց՝ 200 հորթի համար։ Անասունները պահվում են ընդարձակ լուսավոր և տաք շնչքբում։ ԿԱ.Ձ-ի գոմերից մեկի ներքին տեսքը ցույց է տրված մակետով։ Ստորև տեղավորված են ախտին մենատնտեսի հին գոմի մակետը—մութ, կեղասոտ շնչք, առանց լուսամուտի, վորտեղ անասունների հետ մեկտեղ ապրում եր նաև ինքը «տանտերն» իր ընտանիքով։

Կոլտնտեսությունը խոշոր ուշադրություն է դարձնում նախի վորակը բարեկամվելու գործին։ Ֆերման կոմպլեկտավորված ե բարձր մթերատվությամբ անասուններով։ Կովերի մեջ կան այնպիսի ունկորդիստեկաններ, ինչպիսին ե «Ա.Հիւեն» կովը, վորը 300 որում տվել ե 5.297 լիտր կաթ՝ 4,29 տոկոս յուղայնությամբ։


Կոլտնտեսությունը լայն կերպով կիրառում է արհեստական սերմնավորումը։ Այդ հնարավորություն ե տալիս լիովին ոգտագործել աչքի ընկնող արտադրուներին և արագացնում ե անասունների վորակը բարեկամվելու տեմպերը։

Ֆերմայի կովկեթ ընկ. Մկրտչյանը 14 կովից՝ միջին հաշվով յուրաքանչյուրից ստացել ե 2.850,7 լիտր կաթ, ընկ. Դավթյանը 13 կովից՝ միջին հաշվով յուրաքանչյուրից ստացել ե 2.380,9 լիտր։

Մատլինի անվան կոլտնտեսությունը 1938 թվին միայն կաթնապլանքային ֆերմայից ստացել ե 397,2 հազար ոուրլու յեկամուտ։

Յերբեմնի խուլ, լեռներում կորած, կուլտուրական աշխարհից կարված Զալալուղի գյուղը, վորտեղ գտնվում է այս կոլտնտեսությունը, Խորհըրդային իշխանության գյոյւթյան տարիների ընթացքում դարձավ քաղաք։ Այստեղ ե ապրել ու աշխատել բոցաշունչ հեղափոխական Ստեփան Շահումյանը։ Նոր քաղաքը կոչվում է նրա անունով։ Կոլտնտեսականները սիրով են հիշում լեգեն-

Կոսայի Շքամի «Բանավեն» կուտնահարյան կոմիտե-Վարչականի մասնակիություն։



Դամբ բուլշեվիկն, վորը 1918 թվին ընկալ հաղովի  
26 կոմիսարների թվում:

Այդ նույն ստենդի վրա յեն «Կոլեկտիվ աշխատանք» կոլտնտեսության կԱ.Յ-ի եքսպոնատները: Այս կոլտնտեսությունը յուրաքանչյուր ֆուրաժային կովից միջին հաշվով ստացել է 2.163 լիտր կաթ: Այստեղ առանձին ուշագրության արժանի յեռքինակելի կերպով կազմակերպված կաթնառնտեսությունը: Մի շարք լուսանկարներ կոնկրետ որինականերով ցույց են տալիս ֆերմայի լավագույն առաջավորների աշխատանքի հմտնական ձևերը:

Դահլիճումն ե խոշորագույն պանրագործարանի մակետը: Այդ գործարանը կահավորված ե տեխնիկայի վերջին խոռոքի համաձայն և արտադրում ե շվեցարական բարձրորակ պանիր, վորը հայտնի յեռքինականի սահմաններից դուրս վայրերում:

Բուռն թափով զարդանում ե Հայկական ԽՍՀ-ի կաթնառն անասնաբուծությունը: ԽՍՀՄ ժողկոմ-խորհի և ՀամԿ(բ) կ կենակոմի 1939 թվի հուլիսի 8-ի վորոշումը «Կոլտնտեսություններում հանրային անասնաբուծությունը զարգացնելու ձեռնարկումների մասին» ել ավելի կամրապնդի Հայկական ԽՍՀ-ի անասնաբուծությունը և կապահովի նրա հետագա լայն զարգացումը:

Այս դահլիճի յեղբակակիչ ստենդի վրա բերված են ընդհանուր տվյալներ շերամապահության զարդացման մասին: Շերամապահությունը Հայաստանի դյուլատնտեսության յեկամտաբեր ճյուղերից մեկն և ունի հետագա զարգացման մեծ հեռանկարներ: Բժժոժի մթերումը հանրապետությունում 1938 թվին հասավ 117.672 կերպրամի՝ 1932 թվի 18.600 կերպրամի դիմաց: Գրենայի չորս նոր դորժարանները 1938 թվին տվել են 61 հաղար տուփ գրենա:



Կալինինյի շրջանի «Կոլեկտիվ աշխատանք» կոլտնտեսության ստենդի մի մասը:

Ստենդի վրա տրվում են «Քանաքեռ» կոլտնտեսության աշխատանքի ցուցանիշները, վորը շերամապահության մեջ հասել և աչքի ընկնող հաջողությունների: Կոլտնտեսությունը ստեղծել և շերամապահության կերի հաստատուն բաղա: Տնկել և 2·150 բարձրաբուն թթենու ծառ և ստեղծել և 3 հեկտար թթենու տնկարան: Տիրապետելով շերամապահության առաջավոր տեխնիկային, կոլտնտեսությունը 1938 թվին ստացել և Բաղդադ ցեղի բոժոժի 73,5 կիլոդրամ և դեղին ցեղի՝ 66,6 կիլոդրամ բերք: Մի շարք լուսանկարներ ցույց են տալիս շերամի վորթը կերակրելու տեխնիկան:

Բարձր ցուցանիշների յեն հասել կոլտնտեսության առաջավոր շերամապահները: Ընկ. Թովմասյանը յուրաքանչյուր տուփի գրենայից ստացել և 96 կիլոդրամ բոժոժ (Բաղդադ), ընկ. Հարությունյանը՝ 79 կիլոդրամ, ընկ. Դոկտորիանը՝ 78 կիլոդրամ բոժոժ:



## ԱՍԱԼԻՆՅԱՆ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՒ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Պայլիլիոնի վերջին դահլիճում տեղավլորված են Հայկական ԽՍՀ-ի բուսաբուծության վերաբերյալ նյութերը: Հայաստանի նախահեղափոխական բուսաբուծության համար բնորոշ եր ծայրաստիճան հետամնաց տեխնիկան, արորով հողի մշակումը, կամերով կալսումը, ցածր և անկայուն բերքը: Դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում հացահատիկի ցանքերի տարածությունը կըրճատվեց և 306 հազար հեկտարից հասավ մինչև 78 հազար հեկտարի:

Հայաստանի դյուզատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետեւանքով բավականաչափ ընդարձակվել և հացահատիկի և այլ կուլտուրաների ցանքերի տարածությունը: Արտադրության պրոցեսների մեխանիզմիցին և առաջավոր աղբուտեխնիկայի արմատացումը կրկնապատկեցին բաղմաթիվ կուլտուրաների բերքատվությունը: Տարեց տարի ընդարձակվում է կերաբույսերի, հատկապես Սիսիանի տեղական կորընդանի տարածությունը: Այդ կորընդանն աչքի յէ ընկնում իր արտակարգ բարձր վորակով:

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման հզոր Փակտորներ են մեքենատրակտորային կայանները, վորոնք կոլտնտեսական

արտադրության մեջ արմատացնում են առաջավոր ազգային բնիկան : Դահլիճի առաջին ստեղծի վրա ցուցադրված և հոր տրակտորային պարկով և գյուղատնտեսական բարդ մեքենաներով սպառազինված Հոկտեմբերյանի ՄՏ կայանի առաջավորների աշխատանքի փորձը : ՄՏ կայանը սպասարկում է Հոկտեմբերյանի ցընանի 30 կոլտնտեսություններ : 1938 թվին կայանը հեղինել և (փափուկ վարի վերածած) 46 հազար հեկտար կոլտնտեսային հողեր՝ պլանով նախատեսված 44 հազար հեկտարի դիմաց : ՄՏ կայանի նախաձեռնությամբ առաջին անգամ կատարվել ե մարկոսման աշխատանքների մեխանիզացիա, վորը յուրաքանչյուր հեկտարի վրա տալիս ե 4 բանվորական որվա խնայողություն : 1938 թվին կատարվել ե 7.869 հեկտար տրակտորային մարկոսում :

Հոկտեմբերյանի ՄՏ կայանի կողմից սպասարկվող կոլտնտեսությունները ստանում են բարձր և կայուն բերք : ՄՏ կայանի կողմից սպասարկվող ցընանում միջին բերքը 1938 թվին յեղել ե — 16,3 տեսներ բամբակ, 15,2 տեսներ հացահատիկ, 64 տեսներ խաղող : 1938 թվին ՄՏ կայանը կատարել ե բամբակի հնդկապատիկ կուլտիվացիա, դաշտն ե տեղափոխել 1.200 տոննա հանքային և 24 հազար սայլ տեղական պարաբանյութեր, կատարել ե 5.100 հեկտար աշխանավար :

ՄՏ կայանի կողմից սպասարկվող 30 կոլտնտեսություններից միլիոնատեր կոլտնտեսություններ են 1937 թվին — 5, 1938 թվին — 10 : Շրջանում 1938 թվին յուրաքանչյուր աշխորի դիմաց զրամով վճարվել ե միջին հաշվով 10 ռուբլի 40 կոտեկի :

ՄՏ կայանը գերակատարել է հացահատիկի բնավեճարի պետական առաջադրանքը և 1938 թվին ստացել ե 741.616 ռուբլի մաքուր ոգուտ :

ՄՏ կայանի աշխատողներն ապրում են կուլ-

տուրական պայմաններում : Կառուցվել ե յերկու ակումբ դրադարանով և յերկհարկանի բնակելի շնէք : 55 տրակտորիստներ, աղբոնումներ, մեխանիկներ և ՄՏ կայանի այլ աշխատողներ իրենց համար կառուցել են նոր բնակարաններ :

Յերկրորդ ստենդը զրադված ե կերի կուլտուրայի՝ կորընդանի եքսպոնատներով : Խոչը հետաքրքրություն ե ներկայացնում Սիսիանի կորընդանը, վորը ստեղծվել ե բազմամյա ժողովրդական սելեկցիայի հետեւանքով : Մինչև վերջերս յենթադրվում եր, վոր կորընդանը կուլտուրաների շարքն ե մտցվել առաջին անդամ XV դարում ֆրանսիայում և այնտեղից ներմուծվել ե Խուսաստան : Սակայն V և XII դարերին վերաբերվող մի շարք պատմական փաստաթղթեր վկայում են, վոր այն ժամանակ արգեն չայսաստանի մի շարք ցընաններում մշակվում եր կորընդանի տեղական տեսակալը : Բազմադարյան բնական ընտրանքի միջոցով չորային լեռնուոտ ցընանների զաման պայմաններում ստեղծվել ե կորընդանի տեսակը, վորը բազմաթիվ կողմերով գերազանցում ե մեղ մոտ տարածված յելլոպական տեսակներին : Սիսիանի կորընդանը հակայական նշանակություն ունի անասնապահության կերի հաստատուն բազա ստեղծելու և խոտադաշտային ցանքացընակառություն մտցնելու համար :

Չայսաստանում կատարվում է Սիսիանի կորընդանի սերմի ուժեղ վերաբարդություն : 1938 թվին կորընդանով զբաղեցված եր 6.195 հեկտար՝ 1930 թվի 1.100 հեկտարի դիմաց :

Ցուցադրվում են բնական եքսպոնատներ—կենդանի բույսերի նմուշներ, Սիսիանի ու յելլոպական կորընդանի սերմեր ու խոտ, ինչպես նաև համառոտ տվյալներ նրանց բիոլոգիական և անտեսական առանձնահատկությունների մասին :

Թալինի ցընանի «Պայքար» կոլտնտեսությունը

ստացել ե հեկտարից 11,3 ցենտներ Սիսիանի կողմանի սերմ։ Ելեկտրոֆիկացիայի յենթարկվածքարտեզի վրա ցույց ե տրված կոլտնտեսության 8-դաշտյան ցանքաշրջանառության կուլտուրաների միմիանց հաջորդումը։ Մի շաբք լուսանկարներ ցույց են տալիս կորընդանի սերմնաբուծության ստախանովյան ագրոտեխնիկան։ Մինչև ցանքը կատարվում ե նախնական յերես վար և խորը վար (մինչև 20 սանտիմետր)։ Կորընդանի հողամասը նախորդ կուլտուրայի տակ դտնվելու ժամանակ պարարտացվում է գոմաղբով։ Գարնանը կատարվում է յերկրորդ նախացանքային հերկումը։ Մեկ հեկտարի վրա ցանքում է 1 ցենտներ կորընդանի ընտիր սերմ։ Գարնանը կորընդանի ցանքերը փոցիւմում են «զիգզագ» փոցիւմ։ Մայիսին և հունիսին կատարվում է ինամքով քաղցան։

Դահլիճի հետեւյալ ստենդը ցույց ե տալիս ծխածոտաբուծության նվաճումները։ Ծխախոտաբուծությունը Հայաստանի գյուղատնտեսության նոր ձյուղերից մեկն ե, վորը ստեղծվել ե Խորհրդային իշխանության որոք։ Արժեքավոր գեղին ծխախոտով զբաղեցված է 2.900 հեկտար։ 1919 թվին Հայաստանում կար ընդամենը 100 հեկտար մասորկայի Ղոյլասար ծխախոտ։ Նորապես ստեղծվել ե ծխախոտի արդյունաբերություն։

Այս ստենդի վրա ցույց են տրված Շամշադինի շրջանի՝ Բերիայի անվան կոլտնտեսության նվաճումներն ու աշխատանքի մեթոդները։ Կոլտնտեսությունը 1938 թվին 30,5 հեկտար տարածությունից ստացել ե հեկտարից 18,4 ցենտներ բարձրորակ ծխախոտ (Սամսուն և Տրապեզունդ)։ Ծխախոտն այստեղ անկվել ե գոմաղբով պարարտացված աշնանավար հողամասում։ Աշնանավարը կատարվել ե հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 5-ը՝ 18—20 սանտիմետր խորությամբ։ Գարնանը յերկու



Կոլտնտեսության Սիսիանի կորընդանի խրձով (Թալիթի շրջանի «Պայքար» կոլտնտեսություն)։

անդամ հերկվել և պարարտացվել հեկտարին 4,4 ցենտներ հանքային պարարտանյութերով:

Սածիներ պարարտելու համար կոլտնտեսությունում կազմակերպվել և ջերմոցային տնտեսություն: Սածիները մշտական տեղում տնկվել են մայիսին: Տարածությունը շարքերի միջև 70 սանտիմետր է, իսկ շարքում բույսերի միջև՝ 20 սանտիմետր:

Ամառվա ընթացքում յերեք անդամ կատարվել են ծխախոտի հողամասի փինը ացում և քաղցան (2 անգամ մայիսին և 1 անգամ հունիսին): Յերկու անդամ կատարվել են ծխախոտի ծաղիկների կտըրտում և կոկում: Հուլիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը վեց անդամ համաքվել են ծխախոտի բերքը:


Կոլտնտեսությունը պետությանը հանձնել են 1937 թվին 30.467 կիլոգրամ ծխախոտ (պլանի 134 տոկոսը), իսկ 1938 թվին՝ 53.200 կիլոգրամ (պլանի 222 տոկոսը): Ծխախոտաբուծությունից կուտընտեսությունը 1938 թվին ստացել է 214 հազար ռուբլու յեկամուտ:

Վերջին 3 տարվա ընթացքում կոլտնտեսությունը կառուցել են տասնամյա դպրոց, ակումբ, մանկամասը, բազանիք, 10 դռմ, ծխախոտի չորանոց:

Կոլտնտեսության բրիգադի ընկ. Մաճկալյանը 5 հեկտար տարածությունից ստացել է հեկտարից 17,8 ցենտներ ծխախոտ: Նա վաստակել է 480 աշխոր և ստացել է 22,9 ցենտներ հաշահատիկ ու 1.900 ռուբլի դրամ:

Ստենդի վրա յեն բաղմաթիվ բնական եքսպոնատներ—ծխախոտի զանազան տեսակներ, Հայկական և Աշ-ի ծխախոտի արդյունաբերության արտադրանքի նմուշներ:

Պալիլիոնի վերջին ստենդը հատկացվել է բամբակաբուծության և հացահատիկային կուլտուրաների եքսպոնատներին: Գեղատեսիլ պանդոյի վրա,



Գեղատեսիլ պանդոյի բանաստեղծության բաժնեմաս (մայիսին) :  
Մ. և Յե. Ավագանյաններ :

վեհապանծ Արարատի Փոնին, ցույց Էն արված բամբակի ընդարձակ դաշտերը։ Նրա կողքին, բարձունքի վրա հասունանում ե ցորենի առատ բերքը։ Բամբակարուծության եքսպոնատները դասավորված են ստենդի աջ կողմում։

Հայաստանի բամբակի դաշտերում կարճամազ Գուգա տեսակը փոխարինվել է խորհրդային սելեկցիոնների կողմից ստեղծված № 915 և № 0246 յերկարամազ տեսակներով։

Եւելտրոֆիկացիայի յենթարկված յերկու հզոր բամբակագոտիչ դործարաններից մեկի ցեխի մակետը ցույց է տալիս բամբակի վերամշակման նոր արդյունաբերությունը, վորը սպառագինված է առաջալիք տեխնիկայով։

«Զահմետ» կոլտնտեսությունը բամբակի բարձր բերք ստացող բազմաթիվ միլիոնատեր կոլտնտեսություններից մեկն է։ 1938 թվին 166 հեկտար տարածությունից կոլտնտեսությունը միջին հաշվով ստացել է հեկտարից 21,33 ցենտներ բամբակի։ Բամբակարուծությունից կոլտնտեսությունը ստացել է 1.242 հազար ոռուբլու յեկամուտ։ Յուրաքանչյուր աշխորին միայն դրամով կոլտնտեսականները ստացել են 1937 թվին՝ 13 ոռուբլի 97 կոսեկ, իսկ 1938 թվին՝ 22 ոռուբլի։ Վերջին յերեք տարվա ընթացքում կոլտնտեսությունը կառուցել է իր ելեկտրոկայանը՝ 300 կետի համար, կովանոց՝ 100 կովի համար, պահեստներ և արտադրական այլ չենքեր։ Կոլտնտեսությունը ունի իր ակումբը, յերկու դրաբուց, մանկամսուր և այլ հիմնարկներ, վորոնք սպասարկում են կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային կարիքները։

Եկրանի վրա դիտողի առջևից անցնում է կաղըերի մի սերիա, վորոնք պատմում են կոլտնտեսության լավագույն առաջավորների աշխատանքի մեռների մասին։

Հայկական ԽՍՀ-ի կոլտնտեսականները համառ պայքար են մզում հացահատիկի ստալինյան բերք ստանալու համար։ Հացահատիկային կուլտուրաներով 1938 թվին զբաղեցված եր 361,2 հազար հեկտար՝ 1919 թվի 78,4 հազար հեկտարի դիմաց։ Միայն 1937 թվին հացահատիկային կուլտուրաների համար յուրացվել է 40 հազար հեկտար հող։ Խոշոր աշխատանք է տարվել հացահատիկային կուլտուրաների բարձր բերք տվող տեսակների ունացման և արմատացման համար։

Հարյուրավոր կոլտնտեսություններ տիրապետում են առաջալիոր ազբուտեխնիկային, ստանում են հացահատիկային կուլտուրաների կայուն և բարձր բերք։ Մարտունու շրջանի «Կոմսոմոլ» կոլտնտեսությունը 136 հեկտար տարածությունից ստացել է հեկտարից 16,9 ցենտներ հացահատիկ։ Կոլտնտեսությանն ամրացված է 1.400 հեկտար հող։ Կոլտնտեսությունը կազմակերպել է կաթնատեսական ֆերմա։ Բոլոր կոլտնտեսականներն իրենց անձնական ողտագործման համար ունեն կով, վոլչխարներ։ 1938 թվին բացի կարսոֆերլից ու կաթնամթերքներից կոլտնտեսականները յուրաքանչյուր աշխորին ստացել են 13,5 կիլոգրամ հացահատիկ։

Պալիլիոնը դիտելուց հետո այցելուն դուրս է գալիս բաց տարածության վրա։ Այստեղ ցուցադրված են պտղատու ծառեր և խաղողի վազեր, վորոնք ուղարկվել են ցուցահանդես Հայաստանի կոլտնտեսությունների և խորհուտեսությունների կողմից։ Արարատարեսատի № 3 խորհուտեսության եքսպոնատները՝ հիանալի կերպով զարգացած դեղձենու, ծիրանի և նշենու հզոր ծառերն աճեցվել են նախկին Սարդարաբաղի անապատում։

Տերրասաներում դասավորված են խաղողի տեղա-

կան տեսակները՝ խարջի, ճիլար, քիշմիշի, առկյա-  
րի, մսխալի և այլն։ Այստեղ կա փարթամ կանաչ,  
ծաղիկներ և հարմար նստարաններ՝ այցելուների  
հանգստանալու համար։

\* \* \*

Խորհրդային Հայաստանի հաղթանակների մա-  
սին, սոցիալիստական դյուլատնտեսության ծաղկ-  
ման և առաջավոր ստախանովականների հերոսա-  
կան աշխատանքի մասին, հայ ժողովրդի ուրախ ու  
յերջանիկ կյանքի մասին են խոսում «Հայկական  
ԽՍՀ» պալիլունի եքսպոնատները։ Այս բոլորը  
ձեռք են բերվել չնորհիվ լենինյան-ստալինյան  
ճիշտ աղքային քաղաքականության, վորն անշեղո-  
րեն վարում ե բոլչեվիկների կուսակցությունը։  
Խորհրդային Հայաստանի հաղթանակները ձեռք են  
բերվել անխնա պայքարում ընդդեմ ժողովրդի թշ-  
նամիների—տրոցիկստական-բուխարինական բան-  
դիաների, բուրժուական նացիոնալիստների, վորոնք  
փորձում ելին վերականգնել կապիտալիզմը, հայ  
ժողովրդին հետ դարձնել դադութային շահագործ-  
ման լծի տակ։ Այդ փորձերը լիովին խորտակվեցին  
չնորհիվ ժողովրդի պողպատյա համախմբվածու-  
թյանը բոլչեվիկյան կուսակցության ու նրա մեծ  
առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը։

Հայկական ԽՍՀ-ի սոցիալիստական դյուլատըն-  
տեսության աշխատողների բաղմահաղարանոց բա-  
նակն ամբողջ հայ ժողովրդի հետ միասին, մեծ  
Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ  
ձեռք-ձեռքի տված, անդուլ կերպով աշխատում ե  
մեր չքնաղ հայրենիքի ուժի և հորության ամրա-  
պլնդման, նրա հարստության ու փառքի հետագա-  
զարդացման համար։ Համամիութենական դյուլա-

տընտեսական ցուցահանդեսն իր աշխատանքը շարու-  
նակելու յե նաև 1940 թվին։ Ցուցահանդեսին մաս-  
նակցելու իրավունքի համար սոցիալիստական մըր-  
ցության մեջ մտնելով, Հայկական ԽՍՀ-ն 1940 թվին  
ցուցահանդես կրա սոցիալիստական դյուլատնտե-  
սության բոլոր բնագավառներում ձեռք բերված-  
ել ավելի մեծ հաղթանակներով, ել ավելի բարձր  
ցուցանիշներով։



## Ց Ա Ն Կ

Եջ

Խորհրդային Հայաստան . . . . .	3
«Հայկական ԽՍՀ» պավիլինը . . . . .	5
Հայաստանի նախահեղափոխական անցյալը և հայ ժողովրդի պայքարը Խորհրդային Խշլանության համար .	7
Մաղկող Խորհրդային Հայաստանը — Խորհրդային Միության իրավահավասար համբավետությունն ե . . . .	12
Խաղողագործությունը — Հայկական ԽՍՀ-ի գյուղատնտեսության առաջատար նյութն ե . . . .	21
Հայկական ԽՍՀ-ի պատգամառնությունը . . . . .	30
Հայկական ԽՍՀ-ի անասնաբուժության վերելքը . . . .	37
Ստալինյան քերքի համար մղվող պայքարում . . . .	49



Перевод с русского А. С. Оганяна.  
Технический редактор  
И. И. Филиппов. Корректор  
А. А. Пецикян.

Уполномоченный Главлита № А-16702.  
Сдано в набор 13/VII—39 г. Подписано к печати 27/VII.

Тираж 7,500.

Учетно-издат. листов 2,04.  
Печатных листов 2. Формат  
бумаги 70 × 92 в  $\frac{1}{2}$  д. л. Заказ  
типограф. № 2493.

Типография «Известия Советов  
депутатов Трудящихся СССР»  
имени И. И. Скворцова-Степанова,  
Пушкинская площадь, проезд  
им. И. И. Скворцова-Степанова,  
д. 5.

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ


ՀՀ Ազգային գրադարան



NL0285996

14783

90 члп.



ОГИЗ • СЕЛЬХОЗГИЗ • 1955

---

ПУТЕВОДИТЕЛЬ ПО ПАВИЛЬОНУ  
„АРМЯНСКАЯ ССР“